

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

ԳԻ

ՍԻԱՍԱՆԹՈՅԻ «ՎՅՈՐԴԻՆԵՐԸ» ՀԱՐՔԸ  
«ԴՐՈՇԱԿԻ» ԳՐԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ

Սիրամանթոյին բախտակից Վարուժանը գրում է. «Ու կը մտնէ ան հայ բանաստեղծութեան ասպարէզը այն օրերուն մէջ, որ հայ տառապանքը միասին ու զուգահեռ կակօսէին հայրենի հողը, հայ կեանքը...»<sup>1</sup>: Դժբախտաբար, հայոց ճակատագրի ողբերգական իրադարձութիւններն էլ ուղենշում են Սիրամանթոյի գրական գործունեութեան ընթացքը: 1896 թ. խառնակ օրերին Սիրամանթոն շատերի նման Պոլսից մեկնում է Եգիպտոս, 1897 թ.՝ Փարիզ, Փնեւ, Լոզան. սերտորեն կապվում է Փարիզում ապրող հայ նշանավոր գործիչների, Եվրոպայի հայ ուսանողական միութեան անդամների հետ: Համակրում էր Հայ հեղափոխական դաշնակցութեանը<sup>2</sup>. Ժամանակի իրադրութիւնն այդպես էր պահանջում. «Եթե հայ ես, ուրեմն դաշնակցական ես, այսինքն՝ հայորդի՝ անկախ քո սոցիալական ինքնութիւնից»<sup>3</sup>:

Բացի այդ, «Դրօշակը»՝ ՀՅԴ պաշտոնաթերթը, ազատագրական պայքարի թեժ գաղափարներով ազգային տրամագրութիւնների մթնոլորտ էր ստեղծում իր շուրջը, կենտրոնացնում հայ հեղափոխական միտքը: Այդ միջավայրից Սիրամանթոն ստեղծագործական լիցքեր էր ստանում, ոգեշնչվում հեղեղի պես խմբագրութիւն հորդող հայդուկային կռիւների մասին լուրերից:

1902 թ. արդեն խմորվում էին «Հայորդիները» շարքի բանաստեղծութիւնները, որոնք 1903 թ. հաջորդաբար տպագրվում են թերթում՝

<sup>1</sup> «Գրական ասուլիսներ», Կ. Պոլիս, 1913, էջ 24:

<sup>2</sup> «Սիրամանթո (Ատոմ Եարճանեան) 1878-1915: Ծնած՝ Ակն: Հայ բանաստեղծ, դաշնակցական գործիչ... Փարիզի մէջ կը հետեւի Սորպոնի համալսարանի գրականութեան ճիւղին որպէս ազատ ունկնդիր: Կ'այցելէ Ամերիկա, Թիֆլիս, Բաքու, Էջմիածին: Կ'աշխատակցի «Դրօշակի» եւ «Հայրենիքի»՝ Պոսթոն, որուն խմբագրութիւնն ալ կ'վարի ժամանակ մը: Զոհ Եղեռնի, 37 տարեկան»։ Ինչ «Յուշամատեն ՀՅԴ», Կ. Ա., Լոս Անճելէս, Քալիֆորնիա, 1992, էջ 102, 205, 213:

<sup>3</sup> «Գրականագիտական հանդես», Ա., Երեւան, 2004, էջ 67:

արժանանալով ընդհանուր հիացումի: Սիամանթոյի առաջին գնահատող-քննադատ Ա. Չոպանյանը գրում է. «Դյուցազնորեն» եւ «Հայորդիները» շարքը երեւան հանած էին ճշմարիտ դյուցազներգակ բանաստեղծը...»<sup>4</sup>: Իսկ «Դրօշակին» իսկապես անհրաժեշտ էին այնպիսի գրողներ ու բանաստեղծներ, որոնք պիտի կարողանային հայ ժողովրդի տխուր կյանքից, համատարած ողբից ցնծության երգեր հյուսել. «...մեծ յուսահատութիւնը մեծ շարժման հնոց չի դառնայ մի ազգի համար, որի պրոպագանդի աղբիւրը լոկ ազատագրական, ոգեւորուած քարոզը չէ, այլ մերկ, անպաճոյճ իրականութիւնը, ուր լացը կերպարանափոխուում է բողոքի, յուսահատութիւնը՝ ապստամբութեան...»<sup>5</sup>: Այս համոզումն ուներ նաեւ Սիամանթոն: Նրա լավատեսության հզոր չեչոտերն էին կրում ազատագրական պայքարի սեւեռուն գաղափարն ու ապագայի նկատմամբ ունեցած հավատը, որոնց համադրումն էլ շարքի գլխավոր մոտիվն էր կազմում: Սակայն իրական մղձավանջից դեպի հաղթանակ տանող ճանապարհը որքան ցանկալի, նույնքան էլ երազային էր բանաստեղծի համար:

Ինչպես Վարուժանը, Սիամանթոն եւս ոգեչնչող ելեւէջներ փնտրեց Հին Հայաստանի պատմության մեջ<sup>6</sup>, ապա իր ապրած ժամակակներում փորձեց վերգտնել երբեմնի ազնվազարմ քաջազուններին: Սիամանթոյի նորօրյա հերոսները բոլորովին այլ էին. «Հին դիւցազները աշխարհակալներ էին կամ ասպէտներ, նորերը՝ Յարճանեանի հերոսները, յեղափոխականներ են կամ առաքեալներ»<sup>7</sup>:

Շարքի քնարական հերոսը՝ դյուցազնական Հայորդին, գալիս էր դարերի խորքից՝ «Իր ըմբոստացողի հրեղէն գլուխն աստղերուն մեջ մխրճելէն // Ու իր ձեռը ատելութեան սուրբովը զինած»: Գալիս էր՝ վերջնականապես ցնցելու «քնացողի, անտարբեր ու անգործօն, եսական ու տկար» ոգին: Թվում է՝ բանաստեղծը շեփորահարի դերն էր ստանձնել՝ մտապատկերում ունենալով իր որդեգրած գեղագիտական սկզբունքների առարկայական վերացարկումները: Այդ հրաշալի քերթվածները ստեղծվում էին ռոմանտիկ բանաստեղծի վեհ գաղափարների եւ դառն իրականութեան սուր հակադրութեան հանգամանքներում. «Արվեստը միշտ առաջանում է հակասութեան առկայութեան պայմաններում. դա կամ բուն

<sup>4</sup> Ա. Չոպանյան, Երկեր, Երեւան, 1988, էջ 662:

<sup>5</sup> «Դրօշակ», 1903, թ. 4, էջ 50:

<sup>6</sup> Հ. Ռշտունի, Սիամանթո, Երեւան, 1979, էջ 16:

<sup>7</sup> Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երեւան, 1987, էջ 159:

պայքարն է, կամ պայքարի արտացոլանքը»<sup>8</sup>: Այլ կերպ՝ մարդկություն գործունեություն ընթացքն ուղղակի պայքարի դրսեւորումն է՝ որպես վերջնական նպատակ: Կարծում ենք՝ նման ընդհանրացումը բնորոշ է Սիամանթոյի ստեղծագործությունը թե՛ գաղափարական-թեմատիկ, թե՛ ներքին տրամաբանություն իմաստով, մանավանդ որ «Հայորդիներում» նա զարգացնում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարը:

Սիամանթոն կուլի է կոչում բոլոր նրանց, որոնց հոգիների մեջ ազատության՝ դեռ չմարած կայծեր կան, որոնց մեջ փառավոր նախնիների՝ Արամի, Տիգրանի, Վարդանի «Յաղթանակող զորութենէն» դեռեւս «չունչ մը մնացած է» («Հայորդիները» Ա)<sup>9</sup>: Նա ստեղծում է նախնաձախնդիր Հայորդու կերպարը, որ, նահատակված հերոսների արյունից արբած, նրանց հետեւելու երազն ունի պահած եւ «տարփանքով հողին ծնրադիր»՝ հերոսի «քայլերուն հետքն» է երկյուղածորեն համբուրում: Սիամանթոյի բանարվեստի գեղարվեստական համակարգում հողը խտացումներով հարուստ խորհրդանիշ է. տվյալ դեպքում այն մեկն է հազարավորներից եւ միեւնույն ժամանակ այդ հազարավորների ամբողջությունն է, նրանց ինքնությունը: Քերթողը կենդանի չունչ եւ ոգի է պարզեւում մայր հողին՝ ներկայացնելով նրան որպես դարավոր մաքառումների, տառապանքների ու ողբերի ականատեսի («Հողին ձայնը»)<sup>10</sup>: Բանաստեղծի փոթորկուն հոգին անհագուրդ կրքով հնչեցնում է «սաքինայոյզ ու արիւնոտ ու յուսահատ հրաւէրը պաղատադին», որը «յաւիտենական մաքառումներու Հողին ձայնն էր», «գերազոյն մարտահրաւէրը»՝ հալածված, թափառական գավակները հավաքելու. «Եւ եթէ կ'ուզէք որ ձեր վաղնջական ազգը դեռ տեւէ, // Ինձի հասէ՛ք, մոլեգնաբար եւ գունդ առ գունդ»: Բոլորին չէ, որ հասնում էր «հողին ձայնը». դժբախտաբար, «ըմբոստացումի եւ աւերումի իրիկունները մահացնող օտարացումների էին մղում զարհուրածներին, չփոթւածներին, միայնակներին»: Այս անողոք դարում նրանք որտե՞ղ պետք է փնտրեին ճշմարիտն ու արդարը. «Ըսէ՛ք, դէպի ո՞ր օգնութիւնը եւ դէպի ո՞ր արիւնարբու թշնամիները պիտի քալենք...» («Զղջումին թափօրը»)<sup>11</sup>: «Վաղորդայնին յոյսը», որ հանգրվաններն էր տանում «ազատութեան ջահակիրները», չափազանց անորոշ էր եւ անհայտ: Միաժամանակ տարակու-

<sup>8</sup> А. Н. Толстой, Полное собрание сочинений, т. 13, Москва, 1949, с. 589.

<sup>9</sup> «Դրօշակ», նույն տեղում:

<sup>10</sup> Անդ, թ. 5, էջ 66:

<sup>11</sup> Անդ, թ. 6, էջ 83:

սանքը խորթ է բանաստեղծի հոգուն. նա համոզված է, որ «ընդվզումի բոցերէն աստուածացած» այդ նույն ջահակիրները իրենց՝ «գիւցազնի Կամքէն ամենագոր, գերագոյն կռիւներու կռիւը կը մղեն» ու կլուսավորեն հայրենի լեռներում բացվող բոսորագոյն արշալույսները: Այստեղ ուրվագծվում է Սիւսանթոյի ռոմանտիզմը, որը դառն իրականութիւնից ծնված լավատեսութիւնն է:

Գեղարվեստական հարուստ համակարգի եւ փիլիսոփայական խոհի յուրատեսակ համադրմամբ նա ստեղծում է խորհրդանշերի մի ամբողջութիւն՝ իրենց անսովոր դրսեւորումներով, որոնց այդօրինակ մատուցումը հատուկ է, թերեւս, կերպարավեստին: Ասենք՝ բանաստեղծական կոլաժ, այն է՝ բառը, բառիմաստից ածանցյալ գաղափարը, բառի պատկերային երանգավորումը, փիլիսոփայական եզրերը եւ ամբողջի գեղագիտական ընդհանրացումը: Դրանք հաճախ գլխատառերով գրվող բառեր են՝ դերանուններ, վերացական գոյականներ, որոնք բանաստեղծութեան համատեքստում արժեւորվում են իրենց նշանակութեամբ՝ Վրեժ, Ատելութիւն, Դավադրութիւն, Ոճիր, Սարսափ, Մահ, Ազատութիւն, Եղբայրութիւն, Պայքար, Հաղթանակ եւ այլն: Նշենք, որ դրանց առատութիւնը հաճախ խրթին է դարձնում Սիւսանթոյի բանաստեղծութեան լեզուն, ստիպում ընթերցողին սեւեռել ուշադրութիւնը, լարել միտքը: Կարծում ենք՝ Սիւսանթոն հենց դա էլ ցանկանում էր՝ քաջ գիտակցելով, որ ազատ բանաստեղծական խոսքը պետք է լինի ավելի խորն ու ընդգրկուն, այլ լասաց ու անուղղակի եւ, ինչու էլ, դժվար. այո՛, դժվար. «Դժվարին բանաստեղծը ստեղծում է դժվարին պոեզիա...»<sup>12</sup>: Բավական է մեկ-երկու օրինակ, ինչպես՝ «արդարակշիռ եւ երկաթեղէն ձեռքերն», «գինեվառ ու կրակոտ կուրծքերէն», «քայլերը մեռելապատ փողոցներուն մէջ Վրէժին աղաղակը գոռացուցին», «դաւաճանները եղբայրադաւներուն հետ գերեզմանուեցան» («Փառք ահաբեկիչներուն»)<sup>13</sup> եւ այլն:

Արդեն տեսանելի է այն ազդեցութիւնը, որ Սիւսանթոն ստեղծում է պատկերների տրամաբանական լարվածութեամբ, եւ ակնհայտորեն դրանք արտահայտում են ոչ միայն հեղինակի կամ ժողովրդի հույզերն ու տրամադրութիւնները, այլեւ իրենց գաղափարական ընդգրկմամբ վերածում են համամարդկային ապրումի՝ պահպանելով, իհարկե, ազգային նկարագիրը: Այստեղ եւս Սիւսանթոն յուրօրինակ է. «Քիչ քերթողներ ունինք, որոնք մեր ճակատագիրն ու արեան պատմութիւնը բառի վե-

<sup>12</sup> Թովմաս Ս. Էլիոթ, Մեղյալ Երկիրը, Երեւան, 1991, էջ 7:

<sup>13</sup> «Դրօշակ», 1905, թ. 8, էջ 7:

րածած ըլլան...»<sup>14</sup>: Իսկապես որ, հայ կյանքի պատմությունը նաեւ հայ բառի պատմության է վերածվել Սիամանթոյի քերթողական արվեստում: Էլիոթի համոզմամբ՝ բանաստեղծի պարտականությունը առաջին հերթին պարտականություն է իր լեզվի նկատմամբ, ապա միայն իր ժողովրդի հանդեպ, պարտավորություն՝ լեզուն պահպանելու, հարստացնելու, կատարյալ դարձնելու<sup>15</sup>: Տող առ տող տեսնում ենք՝ ինչպես է նորանում Սիամանթոյի բանաստեղծական լեզուն, կերտվում՝ մտքին ու գաղափարին զուգահեռ:

«Ոսկեղեն դարագլուխ» է համարում քերթողը հեղափոխությունների ժամանակը: Պայքարի պաթոսն իր գազաթնակետին է հասնում («Կովկաս»<sup>16</sup>, «Դարերու վրէժը»<sup>17</sup>), եւ «սոսկատեսիլ» կերպարանք առած բանաստեղծը չի ցանկանում այլեւս «պաղատանքի, աղօթքի, լացուկոծի եւ ողբի» մատյաններ գրել: Նա «հաւատքի զաւկըներու» «ճամբու վրայ» ռազմերգելու, «հինաւորաց հերոսներու հագագովը» շեփորելու անհագուրդ ցանկությունն ունի: Անձնուրաց հայդուկների խիզախումներով ներշնչված՝ ստեղծում է նիցչեական Գերմարդու, մարդկային առաքինությունների իրական պատկերը. «Նա հայտնագործում է իր միջը՝ նոր հայը, Ֆիդային, հայ հեղափոխականը, հայորդին...»<sup>18</sup>: Եվ խորհրդապաշտական անշոշափելի քնարական հերոսներին փոխարինում են առավել կենդանի հերոսներ՝ Անդրանիկ, Աղբյուր-Սերոբ, Խրիմյան Հայրիկ եւ ուրիշներ, ...անանուն հակառակորդի փոխարեն հանդես են գալիս ժողովրդի թշնամիներ՝ «Սուլթանիզմը, Յարիզմը»<sup>19</sup>: Ատելությունը թշնամու հանդեպ այն հզոր զենքն էր, որով հաճախ զինում էր բանաստեղծն իր ընթերցողին: Կյանքի ու մահվան եզրագծին հասած ժողովուրդը չպետք է վարանի կամ արյան մեջ սպանի ապրելու կամքը. այս ենթատեքստն ունեն շարքի գրեթե բոլոր բանաստեղծությունները, եւ «Յեղին հոգին»՝ «իր գաղափարէն գեղեցիկ», ստվերի պես շրջում էր եւ պայքարի կոչում («Մենախօսութիւն»)<sup>20</sup>: «Աւա՛ղ, աւա՛ղ». երբեմն փո-

<sup>14</sup> Մ. Թեօլեօլեան, Դար մը գրականութիւն (1850-1950), Կահիրէ, 1955, էջ 585:

<sup>15</sup> Т. С. Элиот, Назначение поэзии, Москва, 1997, с. 186.

<sup>16</sup> «Դրօշակ», թ. 11, էջ 162:

<sup>17</sup> Անդ, 1906, թ. 1, էջ 4:

<sup>18</sup> Ս. Սարինյան, Հեղափոխության Նարեկը, «Գրականագիտական հանդես», Ա., Երեւան, 2004, էջ 68:

<sup>19</sup> Ե. Պետրոսյան, Գրական դեմքեր, Երեւան, 1977, էջ 17:

<sup>20</sup> «Դրօշակ», թ. 2, էջ 19:

թորկվում է բանաստեղծը. չլինի՞ թե «հեծեծանքներու, լուին լացուկոծի, մեռնող կեանքին» մեջ «ազատութեան ականալիչ աչքը գերեզմանի հողովը» լցվի. «...ու՞ր են մեր բազուկները, մեր կամքերը, մեր մուրճերը, մեր հարուածներն ազատաբեր» («Թխարաններուն խորերէն»)՝<sup>21</sup>:

Արյունալի կոտորածների, զրկանքների ու թշվառության պայմաններում հուսահատությունն անխուսափելի է, իսկ հուսահատության մեջ հանուն ապագայի հպարտորեն մարտնչելը միստիկական է թվում: Եվ բնական է, որ «Հայրդղիներում» հաղթական կռվի մոտիվը հաճախ է տեղի տալիս տառապանքների, ժողովրդի ցավերի ու տանջանքների նկարագրողականը, ինչպես նաեւ՝ բանաստեղծի տխուր խորհրդածություններին: Սակայն պետք է ասել, որ դրանից պայքարի ոգին բոլորովին չի խամրում. ենթատողերում միշտ նույն միտքն է թաքնված՝ փրկության ճանապարհը մեկն է՝ հետեւել ազատության բարձր ու վեհ գաղափարին: Իրավացի է Նիցշեն՝ «Քչերի բանն է անկախ լինելը՝ դա ուժեղների արտոնությունն է»<sup>22</sup>: Հենց այս համոզմամբ դեպի ստույգ մահն են քայլում Սիամանթոյի Հայրդղիները՝ «ցեղին ցաւովը սպառագէն եւ մօտաւոր մահէն զօրաւոր...»: Նրանք չէին երկնչում մահից, քանզի գիտեին՝ գաղափարն է ապրելու. «Միայն Գաղափարն է, որ ո՛չ մահ ունի, ո՛չ դատաւոր, ո՛չ գերեզման...», իսկ «կախաղաններու կատարէն» նրանց վերջին խոսքերն էին ահագնորեն տարածվում՝ «...կեցցե՛ն Ըմբոստները եւ կեցցե՛ Հայաստան...» («Կախաղաններու կատարէն»)՝<sup>23</sup>:

Հայրենիքի փրկության գերգաղափարը, որպես անշեջ ջահ, պիտի ուղեկցեր սերունդներին, պիտի որոշեր մոխիրների վրա ծնված «որբերուն ճակատագիրը» («Որբերուն ճակատագրէն»)՝<sup>24</sup>: Իսկ նրանք «վաղվա Հայրդղիններն» էին, որոնց ճակատագրով մտահոգված էր բանաստեղծը. «...ապագայի, սերունդների կամ անմահության միտքը որքան էլ պատրանքային լիներ, այնուամենայնիվ, արվեստագետի համար անօրինակ էներգիայի աղբյուր էր, որը նրան զորակցում էր»<sup>25</sup>: Այս լուսավոր հավատը հաճախ մթափնում էր դավաճանության ու կեղծիքի ճիրաններում. «Մեռելներ կան, որ պէտք է անգամ մը եւս մեռցնել...» («Դաւա-

<sup>21</sup> Անդ, թ. 9, էջ 143:

<sup>22</sup> Ֆ. Նիցշե, Բարոց եւ չարից անդին, Չաստվածների մթնշաղ, Երեւան, 1992, էջ 32:

<sup>23</sup> «Դրօշակ», թ. 11, էջ 171:

<sup>24</sup> Անդ, 1907, թ. 2, էջ 23:

<sup>25</sup> Պ. Վալերի, Ոգու քաղաքականություն, Երեւան, 2005, էջ 110:

ճաններ»<sup>26</sup>։ այսպիսի նողկանք էր զգում բանաստեղծը նրանց հանդեպ՝ նզովելով դավաճանություն ոճիրների ծնունդը։ Սիամանթոն մանկան ծնվելու երանավետ, բերկրալից պահին հակադրում է «Աղէտաբեր երկունքի եւ սանդարամետեան գալարումներու ժամը...», պատկերում է դավաճան ծնող մորը՝ որպես «դժոխատիպ դեմքով կին մը»։ Եւ «Ճիւղը կը ծնի...»։ Բանաստեղծը զարհուրում է. չկա այդ «կայէնեան կերպարանքով» «չնագայլի ու ճմակների» ծնունդը կանխող որեւէ ուժ, ու նրանք շարունակում են «ապրիլ, չնչել, սնանիլ, պայծառները ողջունել եւ անոնց նայելով ժպտիլ»։ Ահավասիկ, հերոսների կողքին ապրում են եւ դավաճանները. մնում է միայն նրանց ասել. «Դուք անցել եք որդից մինչեւ մարդը ճանապարհը, եւ շատ բան ձեր մեջ դեռ որդ է»<sup>27</sup>։

Ի հեճուկս անարդարություն, չարիքի ու դաժանություն՝ Սիամանթոն ցանկանում էր իր քնարը ծառայեցնել «առիւծադեմ կտրիճներուն», նրանց փառաբանությունը, եւ բանաստեղծությունն ավարտում է այդ «անվեհերներուն, առաքեալներուն» պարգեւած ոգեշնչումով. «...կարմիր երգեր հիւսեմ եւ յստակ մարմարներս քանդակեմ...»։

Շապին-Գարահիսարցի Արմենակ Գարակէօզեանին (Զավեն)<sup>28</sup> է ձոնել «Կամքի մէջ դիւցազն»<sup>29</sup> քերթվածը, որտեղ «ստրկութեան տակ վատորէն ծռած» ժողովուրդներին «Կամքի» վեհացնող դրսեւորումն է ավետում. «Դարերու մուրը մաքրող, պատմութեանց ոսկին նորոգող Հայորդին պիտի երգեմ...»։ Առանձնահատուկ է բանաստեղծի վերաբերմունքը Հայորդիների նկատմամբ, որում եւ խտանում է նրա անսահման հայրենասիրությունը։ Վիպապաշտ բանաստեղծը վեհացնում է հերոսի մահը որպես «դիւցազնութեանց խորհրդանիշ»՝ ինքն էլ դառնալով «զօրաւոր քերթողը յեղափոխութեան»<sup>30</sup>։

Այսպիսով՝ «Հայորդիները» շարքով Սիամանթոն «արդեն հանդես է գալիս նաեւ որպես հրապարակախոս, պատգամախոս, ժողովրդի գաղա-

<sup>26</sup> «Դրօշակ», 1908, թ. 4, էջ 60:

<sup>27</sup> Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, Երեւան, 1990, էջ 7:

<sup>28</sup> «Երբ գնդանին մէջ գազան կառավարութիւնը անլուր չարչարանքներու տակ ուզեց գաղտնիքներ խլել Արմենակէն, սա հնուօրեան հերոսի պէս կամ պէտք էր լեզուն խաճել փրցնէր, կամ մահան մէջ անմահանար։ Արմենակ վերջինը ընտրեց, դիւցազնի մահով մը ողջակիզեց իր կեանքը 22 տարեկան շքեղ հասակին մէջ, իր գաղափարին եւ նկարագրին բովանդակ աստածացումով»։ տե՛ս «Դրօշակ», թ. 6, էջ 92:

<sup>29</sup> Անդ:

<sup>30</sup> «Գրական ասուլիսներ», նոյն տեղում, էջ 26-34:

փարական առաջնորդ եւ նրա պայքարի երթի օրհներգութեամբ<sup>31</sup>, իսկ շարքի հերոսները՝ Հայորդիները, կենդանութեան շունչ եւ ոգի էին պարգեւում առանց այն էլ մահագութ զարհուրանքներով, քաղաքական «տխուր» վերլուծութիւններով, միջկուսակցական բանավեճերով հագեցած «Դրօշակի» էջերին:

## РЕЗЮМЕ

Жестокая судьба армянского народа на рубеже XIX-XX вв. стала основным лейтмотивом работ Сиаманто, которые были написаны в уникальном стиле. Он переехал из Женевы в Париж и начал работать на газету “Дрошак”. Его поэтическая работа “Айвординер” (Дети армян) была написана между 1902 и 1908 гг. и начиная с 1903 г. публиковалась в газете “Дрошак”. В этой коллекции произведений Сиаманто описывает глубокую печаль и скорбь, которую многие пережили после резни устроенной турецкими властями. Он надеялся зажечь дух революции в молодом поколении армян и дать им понять, что дорога к спасению лежит через вооруженную борьбу.

## SUMMARY

The cruel fate of the Armenian nation at the border of the 19-20th centuries became the main theme of works of Siamanto written with a unique and exceptional style. He moved to Geneva from Paris and started working for “Droshak” newspaper. His poetic three-part series “Hayordiner” (Sons of Armenians) was written between 1902 and 1908 and starting from 1903 was being published in Droshak. In this collection Siamanto portrayed deep grief and mourning that many had to endure after the Turkish massacres. He was hoping to ignite the revolutionary spirit in the younger generation of Armenians and to make them understand that the road to salvation is through armed struggle.

<sup>31</sup> Դ. Գասպարյան, Առոմ Յարճանյան (Սիամանթո), Հայոց լեզու եւ գրականություն, թ. 3, Երեւան, 2010, էջ 5: